ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով խողովակային ապրանքների և չափիչ քանոնների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 26 մարտի 2020թ.

ժամը. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնահատման մասին

(Մ. Առաքելյան)

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով խողովակային ապրանքների և չափիչ քանոնների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի մարտի 18-ին, ժամը 11:00-ին:

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց խողովակային ապրանքների և չափիչ քանոնների գնման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Խողովակային ապրանքներ	640000 (վեց հարյուր քառասուն հազար)
2	Չափիչ քանոն,շինարարական	510000 (հինգ հարյուր տաս հազար)
3	Չափիչ քանոն,շինարարական	225000 (երկու հարյուր քսանհինգ հազար)

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«ԿՌ Պրոջեկտս» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	Խողովակային ապրանքներ	1333333	1600000

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց: Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Գնահատող հանձնաժողովը որոշեց «ԿՌ Պրոջեկտս» ՍՊ ընկերության, հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման հայտով նախատեսված նախահաշվային արժեքը, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.7 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գնման ընթացակարգի 2-րդ և 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ ոչ մի հայտ չներկայացվելու հիմքով:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ՝ բանակցությունների վարման նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ժամը, 11:30-ին ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ.Առաքելյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքոնյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան